ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2016 թվական N 162-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 04-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Լ. Բարսեղյան		
Ա. Գրիգորյան		
Գ. Թաթարյան		
Վ. Եդիգարյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Ռ.Մխիթարյան		

Է. Մկրտչյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» հոկտեմբերի 2016 թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2016թվականի հոկտեմբերի 04-ի N 162-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

04 հոկտեմբերի 2016 թվական, սկիզբը՝ ժ. 12:00

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

3. 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

4. ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

5. «ՓՅՈՒՆԻԿ» ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԼԵՎՈՆ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հոկտեմբերի 2016 թվական N 163-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի NN 2,3,6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1,2,3 հավելվածների:

2.Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան նախատեսնված պահուստային ֆոնդի 4-րդ եռամսյակի 46.944.000 (քառասունվեց միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել ֆոնդային մաս:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Թաթարյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» հոկտեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2016 թվական N 164-Ա

2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2016 թվականի օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում առավել բարձր արդյունքների հասած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի **ավագանին որոշում է.**

1. 2016 թվականի օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 11.700.000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

	Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Լ. Բարսեղյան			
Ա. Գրիգորյան			
Գ. Թաթարյան			

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» հոկտեմբերի 2016 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի
հոկտեմբերի 04 -ի N 164-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ

Մարզիկներ

1. Ալեքսանյան Արթուր- Հունահռոմեական ըմբշամարտ, Օլիմպիական խաղերի չեմպիոն-5.500.000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
2. Մինասյան Գոռ-Ծանրամարտ, Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն-2.000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ
3. Բաղդասարյան Հակոբ- Հունահռոմեական ըմբշամարտ, աշխարհի պատանիների III տեղ-150.000 (հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
4. Ղարիբյան Մամիկոն-Շախմատ, Եվրոպայի պատանիների I տեղ-300.000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
5. Խաչատրյան Էդգար- Հունահռոմեական ըմբշամարտ, աշխարհի երիտասարդների III տեղ-200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
6. Գալստյան Արթուր- Հունահռոմեական ըմբշամարտ, Եվրոպայի պատանիների III տեղ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
7. Մինասյան Յաշա-Ծանրամարտ, Եվրոպայի պատանիների III տեղ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
8. Բագրատյան Բաբկեն- Ծանրամարտ, Եվրոպայի պատանիների III տեղ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
9. Լալայան Վարազդատ- Ծանրամարտ, Եվրոպայի պատանիների III տեղ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

Մարզիչներ

1. Ալեքսանյան Գևորգ- Հունահռոմեական ըմբշամարտ -1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
2. Փիլոսյան Հակոբ-Ծանրամարտ-1.000.000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ
3. Մաթևոսյան Սեդրակ- Շախմատ-150.000 (հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
4. Գևորգյան Անդրանիկ- Հունահռոմեական ըմբշամարտ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
5. Շահնազարյան Հովհաննես-ծանրամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
6. Կարապետյան Կարեն-ծանրամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
7. Կարապետյան Արմեն-Հունահռոմեական ըմբշամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
8. Խաչատրյան Էդգար- Հունահռոմեական ըմբշամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 11.700.000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի
Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ **Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2016 թվական N 165-Ա

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սպորտի վաստակավոր վարպետ գյումրեցի հունահռոմեական ըմբիշ Արթուր Ալեքսանյանի հայրենական սպորտի զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդը, նրա բացառիկ ձեռքբերումներն ու նվաճումները (Եվրոպայի եռակի, աշխարհի կրկնակի և Օլիմպիական խաղերի չեմպիոն), վաստակած բարձր հեղինակությունն ու համբավը ամբողջ աշխարհում, ինչպես նաև իր ծննդավայր Գյումրու հանրահռչակումը սպորտի միջազգային մրցահարթակներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 142-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Արթուր Գևորգի Ալեքսանյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

	Կողմ (15)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Ադամյան			
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Լ. Բարսեղյան			
Ա. Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			
Գ. Թաթարյան			
Հ. Խաչատրյան			

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» հոկտեմբերի 2016 թ.